ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-24/12 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«25» «հոկտեմբերի» 2023թ.,**
ժամը՝ 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի անվտանգության խորհրդի քարտուղարի
օգնական՝ Տաթևիկ Պետրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի անվտանգության խորհրդի քարտուղարի
խորհրդական՝ Միքայել Ավետիսյան

Վարչապետի աշխատակազմի անվտանգության խորհրդի գրասենյակի
Ռազմական անվտանգության վարչության տեղեկատվական քաղաքականության և
կիբեռանվտանգության բաժնի պետ՝ Էդգար Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների
կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-24/12» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-24/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. հոկտեմբերի 23-ի ժամը 10:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2023թ. հոկտեմբերի 24-ին ժամը 10:00-10:30-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

N	Մասնակցի անվանումը	Հեռախոս	ՀՎՀՀ
1	Ռումորս ՍՊԸ	+374 11 205 151	00895296

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 2, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

3.1 Առաջին տեղ զբաղեցրած «Ռումորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

3.1.1 գնման ընթացակարգի դիմում-հայտարարության մեջ 1)-ին ենթակետը չի համապատասխանում հրավերի պահանջներին /բացակայում է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը/:

3.1.2 Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը /հրավերի հավելված 1.3/ չի համապատասխանում հրավերի պահանջներին (ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը լրացնում է կայքէջի հղումը):

Ընդունվել է որոշում՝ կողմ- 2, դեմ-0

4. **«ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-24/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին**

Գնահատող հանձնաժողովը որոշեց

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել «Ռումորս» ՍՊԸ-ին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկի նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2023 թվականի հոկտեմբերի 27-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 1, 226 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Տաթևիկ Պետրոսյան	
Անդամներ՝	Միքայել Ավետիսյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	